Մալքոմ Գլեդուելլ. Վճռական Պահ.
Ինչպէս կարող են փոքր երեւոյթները մեծ փոփոխութիւններ բերել:

(Նիւ Յորք, Լիթթլ Բրոուն, 2000թ.)

Բացառիկ մարդկանց օրէնքը: Սոցիալական համաճարակները աշխատում են միեւնոյն սկզբունքով: Դրանք նոյնպէս առաջացել են մի քանի բացառիկ մարդկանց ջանքերով:

Դա գալիս է նրանից, թէ ինչքանով են նրանք շփուող, ինչքանով են եռանդուն կամ ազդեցիկ իրէնց հաւասար մարդկանց շրջապատում:

Վերոյիշեալ օրէնքն ասում է, որ այդ բացառիկ մարդկանցից մէկը նշմարեց հասարական նոր միտում եւ իր սոցիալական կապերի, եռանդի, խանդավառութեան ու անհատականութեան շնորհիւ տարածեց այն (էջ 21-22):

Կպչողականութեան գործօնը: Կպչողականութեան գաղափարը վիթխարի նշանակութիւն ունի վճռականութեան մէջ, այն իմաստով, թէ ինչպէս ենք մենք վերաբերում սոցիալական համաճարակներին:

Մենք շատ ժամանակ ենք ծախսում միայն մտածելով, թէ ինչպէս հաղորդագրութիւններն առաւել վարակիչ դարձնենք եւ ինչպէս մեր ստեղծածով ու գաղափարներով հնարաւորին չափ շատ մարդկանց նուաճենք: Սակայն հաղորդկացման կարեւոր դրոյթներից մէկը մեր համոզուածութիւնն է այն բանում, որ հաղորդագրութիւնը չի մտնի մարդու մի ականջից եւ դուրս գայ միւսից:

Կպչողականութիւնը նշանակում է, որ հաղորդագրութիւնը ազդեցութիւն է գործում: Դու չես կարող այն հանել գլխիցդ, քանի որ այն դաջւում է քո ուղեղում:

Կպչողականութեան գործօնն ասում է, որ յատուկ ձեւեր եւ միջոցներ կան վարակիչ հաղորդագրութիւնները յիշելի դարձնելու համար, սակայն ինֆորմացիայի ստեղծման եւ մատուցման մէջ համեմատաբար աւելի պարզ փոփոխութիւններ են կիրառւում, որոնք կարող են մեծ տարբերութիւն տալ նրա ներգործութեան չափի մէջ (էջ 24-25):

Կոնտեքստի Գործօնը:

Մի փորձի ընթացքում, երբ մարդիկ մենակ են նստած մի սենեակում, որի դրան անցքից ծուխ էր լցւում սենեակը, 75 տոկոսը քայլեր ահազանգեցին այդ

ծխի մասին, իսկ երբ խմբով էին նստած, միայն միայն 38 տոկոսը ահազանգեցին դրա մասին:

Այլ կերպ ասած, երբ մարդիկ խմբով են, նրանց գործելու պատասխանատուութիւնը նուազում է: Նրանք մտածում են, որ մէկ ուրիշը՝ տեսնելով ծուխը՝ կ'արձագանքի, կամ մտածում են, քանի որ ոչ մէկը ոչ մի քայլ չի անում, ուրէմն ակներեւ խնդիրը այնքան էլ լուրջ չէ (էջ 25):

Մի քանիսի օրէնքը: Կապակցողներ, գիտուն մարդիկ, առեւտրականներ:

Կապակցող– Փոլ Ռեւեր - կարող է բերնէ-բերան լուրը տարածելու համաճարակ պատճառել: Սոցիալական նուերների բացառիկ հաւաքածու (33):

Վեց աստիճանով տարանջատումը դեռ չի նշանակում, որ բոլորն են իրար հետ կապուած ճիշտ վեց քայլով: Դա նշանակում է, որ շատ քչերն են բոլոր մնացած մարդկանց հետ կապուած մի քանի քայլով, եւ որ մնացածներս աշխարհի հետ կապուած ենք հենց այս մի քանի առանձնայատուկ քայլերի միջոցով: Իրականում, իմ սոցիալական շրջանը բուրգ է, եւ ոչ թէ շրջան: Իսկ այդ բուրգի գագաթին այն միակ մարդն է, ով պատասխանատու է իմ կեանքը կազմող ծանօթութիւնների ճնշող մեծամասնութեան համար: Բացի նրանից, որ իմ սոցիալական շրջանը շրջան չէ, այն նոյնիսկ իմը չէ: Այն Յակոբինն է: Սա աւելի շատ նման է մի ակումբի, որին նա հրաւիրել է ինձ անդամակցել:

Կապակցողները նրանք են, ովքեր օժտուած լինելով աշխարհը միաւորելու յատուկ շնորհքով՝ կապում են մեզ աշխարհի եւ այլ մարդկանց հետ, ովքեր ներկայացնում են մեզ մեր սոցիալական շրջաններին եւ ում մենք վստահում ենք աւելի շատ, քան կարծում ենք:

Ի՞նչն է մարդուն դարձնում Կապակցող: Առաջին եւ ամենաակներեւ չափանիշն այն է, որ Կապակցողները բաւականին շատ մարդկանց գիտեն: Նրանք մարդկանց այն տեսակին են պատկանում, ովքեր բոլորին գիտեն:

Բոլորս էլ գիտենք այդպիսի մարդկանց, բայց ես չեմ կարծում, որ մենք կարեւորութիւն ենք տալիս այդպիսի մարդկանց:

Ես նոյնիսկ վստահ չեմ, որ մեծամասնութիւնը իրօք հաւատում է, որ նրանք բոլորին գիտեն: Բայց նրանք իսկապէս գիտեն բոլորին եւ դա ապացուցելու շատ պարզ եղանակ կայ...

Ամէն քայլափոխին հանդիպող մարդիկ, այլ կէրպ ասած՝ մարդկանց խումբ, օժտուած ընկերներ եւ ծանօթներ ձեռք բերելու արտասովոր ճարպկութեամբ՝ սրանք են Կապակցողները:

Կապակցողները սոցիալական կապեր ստեղծելու բնազդ եւ բնածին շնորհք ունեն: Նա յատուկ մտադրութեամբ չի անուն:

Նա այն չափից դուրս շփուող մարդկանցից չէ եւ ոչ էլ ցուցադրողական մտերմութիւն անողին, ում համար ծանօթութիւն ձեռք բերելը ակներեւ է եւ միտումնաւոր:
Կապակցողն աւելի շատ դիտորդի է նման, ինքնամփոփ, օժտուած հմուտ վարուելակէրպով, ով աւելի շատ գերադասում է հեռաւորութիւն պահպանել:

Նա պարզապէս սիրում է մարդկանց անկեղծ սիրով, եւ նրա համար անսպառ հետաքրքրութիւն է առաջացնում մարդկաց ծանօթանալու եւ փոխյարաբերուելու ձեւերը:

Կապակցողների կարեւորութիւնը կայանում է ոչ միայն իրենց ծանօթների թուաքանակում, այլ այդ ծանօթների որակի մէջ: Կապակցողները ծանօթների հետ «թոյլ կապերի» ցանց են ստեղծում:

Նրանք այն մարդիկ են, որոնք հասանելի են մի քանի քայլով, քանի որ այս կամ այն պատճառով, նրանք շփւում են բազմաթիւ տարբեր ազդեցութեան գոտիների, ենթամշակոյթների եւ իւրայատուկ դերեր եւ դիրքերում:

Նրանց պարագայում բազմաթիւ եւ միաժամանակ տարբեր ազդեցութեան գոտիներում ներկայանալու ունակութիւնը իրէնց անյատականութեանը ներյատուկ արդիւնք է՝ այսինքն, հետաքրքրասիրութեան, ինքնավստահութեան, շփուողականութեան եւ եռանդունութեան ինչ-որ համակցութիւն: